

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՖԵՆԵԼՆ ։

ՖԵՆԵԼՈՆԻՆ սակաւագիւտ հան-
ճարն ու ազնիւ և անոյշ ոճը արդէն
ծանօթ է մեր ազգին ուսումնասիր-
ներուն . իրեն համառօտ վարքն ալ՝ որ
ՏԵԼԵՄԱՔԻՆ հայերէն թարգմանուե-
ր սկիզբը դրուած է , բաւական տեղե-
կութի կու տայ կարգացողին : Մենք
հոս աւելի ջանանք անոր կատարե-
լութիւնները յայտնի ընել , և հան-
ճարոյն ճաշակը ուրիշ մէկ գրուած-
քէն ալ ցուցնել :

Ֆենելոն ծնաւ 1651^{ին} , ու պզտի-
կուց 'ի վեր սաստիկ ուսումնասիրու-
թեանը հետ գերազանց առաքինու-
թիւններով և իմաստութեամբ զար-
դարուեցաւ : Վաղղիայի պէս ծաղ-
կած տերութեան մը թագաւորնե-
րուն , և անով բոլոր աշխարհիս մեծա-
մեծներուն ալ , իրաւցրնէ վարժապետ
և դաստիարակ եղաւ : Արքոր նոր
ընտրուեցաւ ան մեծ պաշտօնին , հի-
մը աս դրաւ՝ թէ քսան միլիոն մարդ-
կանց երջանկութեանը կամ թշուա-
ռութեանը ինքը պատճառ պիտի ըլ-
լայ կերպով մը . անոր համար ո՛վ որ
ուրախակից կ'ըլլար իրեն՝ ան աստի-
ճանին հասնելուն համար , կ'ըսէր .
“ Որչափ տարբերութիւն կայ ան օ-
րուանը մէջ՝ որ մէկը մեծ իշխանու-
թեան մը կը հասնի , և ան օրուանը
մէջ՝ որ ըրածներուն վրայ Մտուծոյ
համար պիտի տայ , ” : Արջանար որ
շատմեծամեծներու սովորականեղած
նեղսրտութիւնը , ամբարտաւանու-
թիւնը , խստասրտութիւն ու ան ախ-
տերը որ իշխաններուն շողոքորթու-
թենէն անունդ կ'առնեն՝ ջնջէ վեր-
ցնէ . և ինքը իր օրինակովը անոնց
խոհեմութիւն , ազնուականութիւն
ու անոյշ կենցաղավարութիւն կը սոր-
վեցընէր : Մասպիսի մեծամեծ աշխա-

տանքներուն փոխարէն՝ 1693^{ին} Վաւ-
պրէյի արքեպիսկոպոս ընտրուեցաւ ,
և եպիսկոպոսութեան պարտքերուն
ու ժողովոց կանոններուն շատ զգու-
շաւոր ու երկիւղած էր . որով եղաւ
քաջ հովիւ եկեղեցւոյ , ամենուն բա-
րի օրինակ , և իր ժողովրդեանը հայր
բարեգութ : Հմտութեանը համար
1693^{ին} Փարիզու ճեմարանին անդամ
գրուեցաւ : Մտուածաբանական , ի-
մաստասիրական ու բանասիրական
շատ գրուածքներ ունի , ամենուն ալ
ոճը պարզ , ինքնաբոլի ու ախորժա-
լուր : Թէպէտ գլխաւոր գրուածքը
կը սեպուի ՏԵԼԵՄԱՔԸ , որ գրեթէ ա-
մէն գլխաւոր լեզուներ թարգմա-
նուած է , բայց ունի նաեւ Տրամաթի-
սոսթիան մեռելոց , Տրամաթիսոսթիան յա-
ղափ պերճախօսութեան , Մասնորդ խղճի
հարց թափաւորի , Համառօտ վարք նախնի
իմաստասիրաց , որ հայերէն ալ թարգ-
մանուած ու տպուած է . իմաստասի-
րական գրուածքներ , թղթեր ու շատ հո-
գեւոր գրուածքներ : Մտնց մէջ ալ
խիստ անուանի են (Յաղափ Վաստիարա-
կութեան աղջկանց , և (Յաղափ Վայոսի
Մարտիոյ գրքերը , որոնց հայերէնն
ալ յուսանք որ քիչ ատենէն կ'ունե-
նանք : Մը այժմ աս ետքինին մէկ
հատուածը կը զննենք հոս :

Բայց անկէ առաջ քանի մը խօսք
ալ Ֆենելոնի կենդանագրին վրայ խօ-
սինք , որպէս զի կարգացողներն իմա-
նան՝ թէ մեր հոս դրածը հազիւ թէ
աս մեծ մարդուն ուրուական կերպա-
րանքն է : Բարձրահասակ էր Ֆենե-
լոն , համեմատ , վատուժ ու տոգոյն .
քիթը արծուունգն , աչուրները խիստ
վառվռուն . այնպիսի կերպարանք
մը ունէր որ մէկ մարդ մը չէիր կրնար
իրեն նմանցընել . ուստի զինքը մէյմը
տեսնողը՝ մէյմըն ալ չէր մոռնար .
(Վանրութիւնն ու անուշութիւնը
մէկտեղ կը փայլէին վրան , զուար-
թութիւնն ու վսեմութիւնը միշտ
կ'երևնային երեսը . իսկ բարակամե-
տութիւնը , մարդավարութիւնը , շը-
նորհալի զուրցուածքը իրեն սեպհա-



Ֆեյեւն :

Կան ձիւրքերն էին, և տեսնողները
չէին կշտանար վրան նայելէն : Իրեն
ամէն աղէկ պատկերներն ալ կարծես
թէ կենդանի են, բայց բուն անձին
հետ բաղդատելով՝ մեռած ու շուքի
պէս բան մը կ'երևնան : Իր ճարտա-
սանութիւնը բնական էր, քաղցր ու
զարդարուն . զուրցուածքը յստակ ու
ճիշդ . կը ջանար որ իր հետը խօսող-

ներէն խելացի չերևնայ ամենեւին . ա-
մենուն կը յարմարէր՝ առանց կեղ-
ծաւորութեան ու շողոքորթութեան .
ուստի ամէն մարդ կը փափաքէր հե-
տը վարուելու, և չէր կրնար անկէ
բաժնուիլ՝ առանց տրտմելու : Գրե-
թէ աս զգացմունքը կ'ունենայ մարդս
նաև հիմա՝ իրեն գրուածքները կար-
դալու ատեն :

“ Եւ արդ առցուք ՚ի քնին զքս-
 քանչեւիսն Եւ յոր միօրինակ փայլեն
 ՚ի մեծամեծսն և ՚ի մանունս յէից :
 Տեսանեմ զարեգակն՝ բիւրիցս բիւ-
 րուք մեծ քան զերկիր՝ շրջան ա-
 ռեալ ՚ի միջոց վայրի, յորոյ ընդար-
 ձակութեանն կէտ իմն է նա լու-
 սաւոր, և ոչ աւելի ինչ : Տեսանեմ
 և զայլս յարփից մեծագոյնս ար-
 դեօք քան զարեգակն, որք ընդ այլ
 սահմանս թաւալին հեռաւորա-
 գոյնս առ ՚ի մէնջ : Իսկ և անդր ևս
 քան զսահմանս անհուն վայրացն
 նշմարեմ ես և այլ ևս աստեղս ա-
 ղօտագոյնս, անթիւս ՚ի բազմութի
 և անտեսս յաչաց . և երկիր յորում
 կամս՝ ընդ այսմ ամենայնի համե-
 մատեալ ոչ այլ ինչ իցէ, բայց կէտ
 անբաժան : Եւ այս ամենայն այն-
 պէս կարգեալ և յօրինեալ, զի ան-
 մարթ է ՚ի բաց բառնալ ՚ի նոցանէ
 զհիւզ ինչ դուզնաքեայ, և չխան-
 գարել զհրաշագան զկերտուածն .
 որ և յար ՚ի շարժման կայ, և յայն-
 պիսում շարժման՝ զի նովին գոգ-
 ցես յաւերժանան և յեղմունք տիե-
 ղերաց և կատարելութիւնք նոցին :
 Եւ ուրեմն հարկ ՚ի վերայ կայ, զի
 վարիցէ զկերտուածս զայս ձեռն ա-
 մենազօր և անվաստակ ՚ի բազմա-
 դարեան ժամանակաց և այսր, և
 մատուցք նորա խաղայցեն սովաւ,
 զի ըստ աստուածեղէն տառիցն
 զխօսս բերիցեմք :

“ Եւ Եւստակիոս կերտուած ոչ նուազ
 ինչ ածէ հիացումն և ՚ի մանունս ՚ի
 մասանցն քան զոր ՚ի մեծամեծսն :
 Վրանգի և զմանրն զայն նկատեալ՝
 տեսանեմ ես անհուն և անհաս, և
 հիանան միտք իմ : Տես ինձ, որպէս
 յանդամս փղին և վիշապ ձկան՝
 նոյն և ՚ի չնչին որդան զգեղապատ-
 շա՛ յօրինուած անդամոց . և գլուխ
 և մարմին, և սրունս և ոտս յար-
 մարեալս՝ մեծամեծացն յար և նման
 կենդանեաց : Եւ յիւրաքանչիւր
 իսկ մասունս յէից աստի կենդա-

նեաց են և մկանունք և ջիղք, և
 երակք և նեարդք և արիւն . և յա-
 րեան անդ ոգիք և հիւթք, և ՚ի
 հիւթսանդ շիթք բազմամասնեայք .
 և անսահման բաղադրութե սահ-
 մանաւոր այնր էակի չիք երբեք կայ
 և դադար :

“ Եւ քաջածանօթ էքս առ հասա-
 րակ բազում ինչ նշմարեմք ման-
 րացուցիւ անծանօթս առ ՚ի մէնջ :
 Եւ ՚ի նոսին իսկ ՚ի մանրացուցիւ
 նշմարեալն որչափ ինչ իրք են՝ յորս
 և ոչ նա զօրէ ինչ տեսանել : Եւ թէ
 հնար էր ևս քան զևս նրբատեսս
 գործել զկազմածսն որք սատար լի
 նին տկարութեան և խոշորութեան
 ականողեացս մերոց, քանի՜ նորս և
 չքնաղս տեսանէաք մեք արդեօք :
 Եւ յոր ոչն զօրեն աչք՝ բեր զմիտս
 յառեսցուք . միտք մեր զմանրացու-
 ցից կալեալ զտեղի, յանդիման
 արասցեն մեզ ՚ի հիւղէս իւրաքան-
 չիւր բիւրաւոր աշխարհս նորանորս
 և աներևոյթս : Եւ կայն ոչ բաւես-
 ցուք մեք նկատել և նովաւ անդա-
 դար ՚ի շամանդաղս անդ գիւտս
 նորահրաշս . այլ ՚ի պարտասել նո-
 րին և ՚ի լքեալ կասել՝ կացցեն մնաս-
 ցեն անտեսք յաչաց մերոց և բիւր
 սքանչելիք ՚ի փոքրագունին յան-
 դամս որդան զածածի

“ Եւ այն ոք իցէ որ պարզել մար-
 թասցի զփափկութիւն զգայունցն
 որովք ընտրէ մարդ զազգի ազգի
 ճաշակս և զբուրմունս իրաց : Եւ
 զիարդ այնչափ բազում հնչմունք
 ձայնից ընդ ունին իմազդեալ միան-
 գամայն, և անշփոթք ներգործի-
 ցեն . և որպէս ՚ի դադարել ձայնիցն
 և ՚ի չքանալ տպաւորեալ մնայցեն
 յիս նկարագիրք նոցին ճշգրիտ և
 կենդանի : Եւ ինչ ճարտարին որ
 զմարմինս մեր յօրինեաց՝ այնքա-
 նեաւ խնամով ծածկոյթ իմն խո-
 նաւ և վայրաբեր արկանել զաչօք
 մերովք, և զականջս մեր ընդէր ան-
 փակս արարեալ : Վրանգի աչք մեր
 խնուն առ ՚ի ննջել, ասէ Լիկերոն .

,, իսկ ականջաց հարկ է 'ի խնուլ անդ
 ,, աչացն կալ 'ի բաց , որպէս զի եթէ
 ,, յանկարծադէպ ինչ վտանգ ուստեք
 ,, հասանիցէ , ազդ 'ի շուինդն ձայ-
 ,, նից արարեալ՝ զարթուցանիցեն ըզ-
 ,, մեզ :

,, Ո՞ր իսկ 'ի վայրկեան ժամանակի
 ,, քանդակէ յաչս իմ՝ զերկին զերկիր
 ,, և զծով , զտարակայեալն յինէն
 ,, գրեթէ յանբաւս : () իարդ զետեղ
 ,, և որիչ կարգ ըստ կարգէ 'ի յան-
 ,, ձուկ կազմածին զկայ առեալ ան-
 ,, եղծ կերպարանք էիցս առհասարակ
 ,, կայցեն՝ յականէն արեւու մինչև 'ի
 ,, դուզնաբեայս իսկ 'ի շամանդաղս :
 ,, Վրանի՛ ևս հրաշակերտ իցէ ուղղոյս
 ,, մերոյ յօրինուած , յորում գանձեալ
 ,, պահին դասք դասք սքանչելի տեսա-
 ,, րանաց բազմապատիկ իրաց , որք
 ,, յօրէ ծննդենէ մերմէ ազդումն ինչ
 ,, ազդեալ իցեն 'ի մեզ : () արմանամք
 ,, ապաքէն ընդ մատենիցն գիւտս , զի
 ,, 'ի նոսա աւանդին յիշատակք ան-
 ,, թիւ պատահարաց , և մթերք ի-
 ,, մաստից . այլ զի՛նչ համեմատութի
 ,, իցէ բնաւ ընդ չքնաղագոյնն 'ի մա-
 ,, տենից և ընդ ուղեղ առն իմաստ-
 ,, նոյ . և քանի՞ն առաւել պատուա-
 ,, կան է և նորահրաշ քան որ 'ի մա-
 ,, տեանսն յայնոսիկ՝ մթերքն որ 'ի
 ,, սմա : Ի՛նչ 'ի փոքու շտեմարանին
 ,, գտանես դրոշմեալ մի ըստ միջէ զա-
 ,, մենայն կերպարանս կարեւորս . եթէ
 ,, կարդաս զնոսա , գան . եթէ 'ի բաց
 ,, արձակես , խորասուզին յալս չգի-
 ,, տեմ՝ յոր 'ի ներքինս , և մեկնին առ
 ,, 'ի տալ այլոց տեղի ... Ո՞ր ձեռն ճար-
 ,, տար գիտաց թագուցանել 'ի կար-
 ,, ծեցեալ տձև զանգուածին զայնչափ
 ,, նկարագիրսն չքնաղս և գեղարուես-
 ,, տըս :

Ի՛նչ գեղեցիկ իմաստներուն հետ
 խիստ աղէկ կը յարմարին նաև Ուս-
 սինին աս անոյշ ու փափուկ խօսքերը .

« Որքանեանց ակն ամփոփէ յինքն էից հոյլ ,
 քանիք յանձուկն 'ի ծիր գրաւին շողք ըսփիււ .
 Անդ ամենայն ինչ հետ ընդ հետ նըկարի ,
 հարեալ 'ի տիպ շարժականին պատկերի .

Զիդք որ կրեն զայն 'ի յուզեղն տանին .
 խուռն անդ թեղից հիւսք զի տրկար , ո՞վ երկին :
 Այլ 'ի նոսա ուշ իմեղեալ ապաստան ,
 Անդ անկորուստ գանձէ աւանդ պատուական .
 Որ ինչ ինձ աչք և լըսելք ընծայեն ,
 Կարէ նա գնել անդ և բառնալ միշտ անդրէն :
 Նոյն ինքն պահ ունի գանձուց իմոց անդ ,
 Հաւատարիմ 'ի տալանդէն զինն աւանդ :
 Ոգիք անդ նուրբ կազմք յարաժամ և պատրաստ ,
 Դէտ նըշանին կան որ առնէ նոցուն ազդ .
 Հրաման հոգի իմ տայ , և հլու արբանեակք
 Սրբոյն յանգամս իմ 'ի ճապուկս անդ երագ :
 Հաստակք անտեսք , ընդ որ գրնալք պողոտայ .
 Ո՞ր զփրկաւէտ եռանդն արեանս իմում տայ :
 Նա զկարեւորն առանց իմոյս հրամանի
 Ըջերմութիւն տածէ յիմումս 'ի մարմնի .
 Ի հաւասար շարժէ նա զսիրտ իմ 'ի յոյլ ,
 Ի կենսականն անդ զիւրն 'ի բնի կազմեալ հոյլ .
 Զեռուցանէ զիս 'ի սրնթացն իւր 'ի ձեմ ,
 Յակն իւր անդրէն եղկ և յուշիկ եղեալ գեմ :
 Ըսպառի միշտ , և նորոգի վերստին .
 Խողովակացն ընդ որ գրնացք են նորին
 Բացեալ գրորունք մուտս համարձակ նրմա տան ,
 Պատրաստք 'ի գնել գարձելումն յետըս խափան :
 Թանձր 'ի ջամբից արիւնն այն ջինջ մածանի ,
 Եւ փոփոխումն այն ձգգէ միւս այլ ըզինի :
 Յեղաշըջի նա թանձրանայ 'ի մարմնի ,
 Եւ ընդ անգամս իմ որ նովաւ ուռդին
 Փոխակերպի 'ի գոյութիւն իմ 'ի բնիկ :
 Ե՛ս ինչ ունիմ պահ օրինացս այսոցիկ ,
 Կամ թէ իմով ինչ հրամանաւրս կացին .
 Հասու ևեթ հազիւ կարեմ գող նոցին :
 Ինձ ըզնոցին միտք ուշիմ օր ըստ օրէ
 Քօղախնդրեալ զհանձար և զկարգ հոլանէ .
 Զիմանալոյն այնորիկ օն ըզկարգին
 Զարարչապետն 'ի միտ առցուք 'ի նոսին :

Երգ Ա. Գ. 277 — 316 :

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

Կասկած և շեղարդոյթիւն :

Երբ ԲԱԶԸ որչափ ալ չհաւատալու բան
 ըլլայ , փիլիսոփայ մարդիկ շատ ան-
 գամ խելք կը սորվին անկէ . ինչպէս
 նաև զգաստը գինովին ըրածներէն
 բան կը սորվի շատ անգամ , խելացին
 անխելքէն , գիտունը տգէտէն , մեծը
 պզտիկէն , զօրաւորը տկարէն : Սոյոք
 գիտենք թէ մեր ուսումնասէր կար-
 դացողներն ալ քիչ շատ՝ խելք սորվե-
 ցան ան երագէն որ Կոծծի անունով
 իտալացի հեղինակէն Թարգմանաբար